**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»**
**ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՐՄԵՆ ՔՈՉԱՐՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Քոչարյան,

Ի պատասխան Ձեր 19.08.2024թ. հ.240-2024 գրության՝ Մոնթե Մելքոնյան փողոցում հետիոտնային անցումներ կազմակերպելու հարցի կապակցությամբ, տեղեկացվում է.

Առաջիկայում նախատեսվում է կազմակերպել մեկ հետիոտնային անցում «Երևան Պարկ»-ին հարակից ճանապարհահատվածում արհեստական անհարթության տեղակայմամբ:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության աշխատանքային ծրագրերի շրջանակներում ներկայումս ձեռնարկվում են համապատասխան միջոցներ նշված տարածքում վերգետնյա անցում կառուցելու համար նախագծանախահաշվային փաստաթղթեր պատվիրելու ուղղությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ